

## ԵՂԻՇԵԻ ԹՂԹԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅՈՒՐԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

### ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Արդի գրականագիտության մեջ արժարժվող մեթոդի խնդիրը պահանջում է գրական երկի քննությունը կատարել տվյալ ոլորտի գիտական-ներառարկայական ուսումնասիրության եղանակով՝ հետազոտության հիմքում ունենալով ելակետային մի քանի առանձնահատկությունների կարևորումը՝ ժանրի, թեմայի, ժամանակաշրջանի<sup>1</sup>:

Ընդունելով հայ հին և միջնադարյան գրականության ժամանակագրական պարբերացման ընդունված բաժանումները<sup>2</sup> և Եղիշեի երկի ստեղծման ժամանակի մասին բնասիրական պարզաբանումները, որ կատարել է Ս. Աբեղյանը<sup>3</sup>, մենք հարցի քննությունը կատարել ենք *սիմ-խրոնիկ մեթոդով*<sup>4</sup>՝ տվյալ ժամանակի կտրվածքով՝ տեքստի միայն ներքին շերտերի ուսումնասիրությամբ հաստատել ասելիքը, ցույց տալ հեղինակային հորինման յուրահատկությունները:

Ուշադրություն է դարձվել առանցքային այն խնդիրների վրա, որոնց շնորհիվ կյանքի են կոչվել մեթոդի ու երկաստեղծման կարևորագույն սկզբունքները: Քանի որ խոսքը թղթի ժանրի մասին է, հետևաբար փորձ է արվում պարզելու, թե

1) ի՞նչ տեսակի թղթեր է գործածում Եղիշեն,

2) ի՞նչ նշանակություն ունի թուղթը երկում և ի՞նչ գեղարվեստական ու մեթոդական խնդիրների է ծառայում:

5-րդ դարում թղթագրությունն ընդունվում և մեծ տարածում է գտնում մեզանում մի կողմից որպես առանձին գրական տեսակ<sup>4</sup>, մյուս կողմից որպես պատմագրական արձակի ներժանրային դրսևորում<sup>5</sup>: Թղթագրական իրադրությունը՝ նամակագիր-հասցեատեր շղթայով, վկայում է թղթի ժանրի և՛ ճկունության, և՛ այլ ժանրերն իր մեջ կլանելու յուրահատկության մասին: Հետևելով անտիկ թղթագիրների օրինակին՝ 5-րդ դ. հայ հեղինակները փորձում են թղթերի բնագրերն իրենց պատմություններում ներկայացնել ոչ ուղղակի պատճենման եղանակով, այլ որոշակի ազատ շարադրանքով<sup>6</sup>, որ բնավ չի թուլացնում նրանց պատմագիտական արժեքը: Դա նաև չի նշանակում, թե այս կամ այն պատմիչը կեղծում է պատմական իրականությունը: Որոշ հեղինակներ էլ թերևս պատճենում են իրենց ձեռքի տակ եղած թղթերը՝

<sup>1</sup> Տե՛ս "Большая советская энциклопедия", т. 16, М., 1974, էջ 165-166:

<sup>2</sup> Տե՛ս Ս. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 687-694 (կատարված շրջանաբաժանումը շարունակվում է նաև Դ հատորում):

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 328-329:

<sup>4</sup> Խոսքը վերաբերում է թղթագրական այն առանձին ժողովածուին, որ հայտնի է իբրև «Գիրք թղթոց», ուր ներառված են վավերական թղթերը: Տե՛ս «Գիրք թղթոց», Երուսաղեմ, 1994: Նաև՝ Ս. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 40:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Ավեքսանյան, Հայ միջնադարյան նամակը (4-14 դդ.), Եր., 1997, էջ 6-7, 32:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 32-40, տե՛ս նաև Ս. Ավդալբեգյան, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Եր., 2009, էջ 35-36:

կեղծելու ոչ մի նպատակ չհետապնդելով: Երկու դեպքում էլ ավելորդ է կեղծիքի մասին խոսելը:

Եղիշեն և Ղ. Փարպեցին որոշակիորեն ժառանգում են մերձավորարևելյան-քրիստոնեական թղթագրական ավանդույթները<sup>7</sup>: Նրանց բերած՝ Հազկերտի հրովարտակի ու տրված պատասխան թղթի տեքստերն ունեն ոճական և կառուցվածքային տարբերություններ: Ոչ ոք, սակայն, երբևէ չի կասկածել Եղիշեի ներկայացրած թղթերի վավերականությանը, քանզի նա եղել է Վարդանի քարտուղարը<sup>8</sup>, և թղթերը գտնվել են նրա տրամադրության տակ, ուստի և բնագրերի ճշգրիտ պատճենումներ են, թեև Ա. Ալեքսանյանը հակված է դրանք փոխադրություններ համարելու<sup>9</sup>: Նա դա պատճառաբանում է Եղիշեի ու Ղազար Փարպեցու բերած նամակների բովանդակային տարբերություններով<sup>10</sup>: Սակայն միայն Ղ. Փարպեցու դեպքում թղթերի՝ փոխադրություն լինելու մասին հավանականությունը կարող է իրական համարվել<sup>11</sup>:

Եղիշեի Պատմության մեջ ներկայացվող երեք թղթերի կարևորությունն առանձնակի է: Դրանք ուշագրավ են նախ իրենց հորինման մեթոդների յուրատեսակ քննության առումով: Եղիշեի երկն սկսվում է մուտք-թղթով, որն ուղերձային բնույթ ունի: Այն ընկալվել է իբրև Պատմություն՝ զետեղված առաջին թղթի շրջանակում<sup>12</sup>, որը, սակայն, չի փոխում դրա ժանրային բնույթը: Մյուս երկու թղթերում (Հազկերտի հրովարտակը՝ գրված Միհրներսեհի ձեռքով, և նրա պատասխանը՝ գրված Արտաշատի ժողովի ընթացքում) դրանք ունեն հակադիր բովանդակություն: Անտիմոմիական ձևն իրեն արդարացնում է, քանի որ գաղափարական պատերազմի դրսևորումն առկա է ամենուր, որը վերածվում է նաև ռազմական հակադրության:

Ա. Ալեքսանյանը նշում է, որ Եղիշեի Պատմությունը առանձնանում է մեթոդի տեսակետից նախ նրանով, որ դասական իմաստով նա պատմություն չի գրում, այլ կատարում է ժամանակաշրջանի այնպիսի քննություն, որ երկի հյուսվածք է ներառում «կրոնադավանաբանական, քաղաքական և գաղափարական առճակատումները»<sup>13</sup>: Թերևս այդ նկատի ունենալով՝ Ե. Տեր-Մինասյանն այն անվանում է դյուցազներգություն<sup>14</sup>: Եղիշեն դեպքերի ականատեսն է, ուստի իր ժամանակը գնահատում է հուզական շնչով, սեփական տպավորությունների հիման վրա ու անմիջական ազդեցությամբ, քանզի հենց դա է մղում պատմիչին դեպի ասքը<sup>15</sup>: Հասկանալի է նաև, որ դա ժողովրդական վեպի պաթոսով չի արտահայտվել, այլ անհատական հույզով: Թեև անհերքելի է, որ հենց դա ժողովրդական մտածողության արքետիպի փոխանցումն է անհատ ստեղծագործողին: Սա պատմագրական երկը շարադրելիս մեթոդաբանական-եկակետային կարևոր նշանակություն

<sup>7</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 19:

<sup>8</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, էջ 323-324:

<sup>9</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 20:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 19:

<sup>11</sup> Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, Եր., 1982, էջ 96-97, 98-105:

<sup>12</sup> Տե՛ս Ա. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 5, 20:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>14</sup> Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Եր., 1971, էջ 127:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 127-128:

ունեցող փաստ է<sup>16</sup>: Եղիշեն սոսկ փաստերն արձանագրող չէ, այլ արվեստագետ, որ խոսում է ամենակարևոր բաների մասին՝ դրանց քաղաքական, կրոնական, սոցիալական նշանակություն հաղորդելով<sup>17</sup>, որը ևս Պատմության մեջ մեթոդական նշանակություն է ձեռք բերում:

Յեղիմակը նպատակադրված է. «Յայսմ յեւթն գլուխս կարգագրեալ և եղեալ ծայրալիր պատարմամբ **զսկիզբն** և **զմիջոցն** և **զկատարածն**, զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով, զառաքինեացն զքաջութիւն...»<sup>18</sup>: Այդ հիմքի վրա կատարում է Պատմության գլխաբաժանումները, որ կառուցվածքային բացառիկ նշանակություն ունի յուրաքանչյուր երկի համար, նաև մեթոդական արժեք՝ այս պարագայում: Գլուխների թվաքանակն աստվածաշնչյան յոթ ուղորտները՝ յոթ երկինքներն են խորհրդանշում: Պատմությունը հանդես է գալիս որպես մի կառույց, որը հավերժացնում է Ավարայրի հերոսների անհայտ գերեզման-հուշարձանը՝ իր յոթ աստիճաններով<sup>19</sup>: Յեղիմակի համար սրանով են պայմանավորված յոթ առանձին «գործողությունները», որոնք նշանավորում են երկի առանձին մասերը<sup>20</sup>: Խորհրդանշորեն այս յոթ մասերը տեղավորվում են նաև երեքի մեջ՝ **սկիզբ**, **միջոց** և **ավարտ**, ինչն ակնհայտ խորհրդապաշտական պատկերացումների մի ամբողջություն է: Իմաստասիրության մեջ վերին ուղորտում ճեմողների երկնային սերն է զրավում Եղիշեին և ոչ թե երկրային փառքը: Ինքն անվերջ այս մասին է խոսում: Յենց երկնային սիրո տրամաբանությամբ են ընթանում Ավարայրին նախորդող գաղափարական պայքարը և Ավարայրը, որն ավարտվում է երկնային դասի ավելացմամբ՝ ևս 1036 սուրբ նահատակներով: Յանուն Դավթի հրամանի կատարման ոչ իսկ վախեցել է, որ իրեն տգետ կհամարեն: Իր գործով ներշնչելու է «մխիթարութիւնս սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջութիւն քաջաց»<sup>21</sup>: Պատմիչը գիտակցում է արվեստի ներգործության մեծ ուժը և չի հապաղում օգտագործել դա հանուն Տիրոջ փառաբանության: Ավելին՝ նա կտրում է օդային արգելքները<sup>22</sup> և թռչելով գալիս է տեսության (քանզի երկու նամակագիրներն իրարից հեռու են): Այլաբանորեն հստակեցնում է իր հորինման մեթոդը: Այսպես. «Այս պարզութիւն զվերնոյն բերէ զնմանութիւն, զոր և մեր ի քեզ տեսեալ, մոռացաք զմեր բնութիւնս: Եւ ահա վերաբերինք ընդ քեզ ճախրելով, և իբրև բարձրաթռչս եկեալ՝ զամենայն վնասակար մրրկածին օդոց անցանիցեմք, և փոքր ի շատէ ծծելով յանապական վերին օդոյն՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց»<sup>23</sup>: Սրանով սովորեցնում է անձի փրկության քրիստոնեական եղանակը: Եվս մեկ մեթոդաբանական քայլ է անում՝ ասելով. «Սկսցուք ուստի արժան է սկսանել», այսինքն՝ ամենածանր հարցից: Եղիշեն չի էլ սիրում ճոռոմ և երկարաբան ոճ: Նա միանգամից սկսում է իր բուն խնդրից:

<sup>16</sup> Տե՛ս **Զ. Ավետիսյան**, Ե դարի պատմագրության մեթոդի դրսևորման առանձնահատկությունները // «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, թ. 1, էջ 15:

<sup>17</sup> Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. 9, էջ 338-342:

<sup>18</sup> Եղիշեի Վասն Վարդանայ եւ Յայոց պատերազմին, Եր., 1957, էջ 4:

<sup>19</sup> Տե՛ս **Ս. Մնացականյան**, Յայկական վաղ միջնադարյան մեմորեալ հուշարձանները, Եր., 1982, էջ 18:

<sup>20</sup> Տե՛ս **Եղիշե**, Վարդանի և Յայոց պատերազմի մասին (թարգմ. Եր. Տեր-Սիմասյանի), Եր., 1971, էջ 6-8 (տե՛ս Վ. Նալբանդյանի ներածականը):

<sup>21</sup> Եղիշեի Վասն Վարդանայ եւ Յայոց պատերազմին, էջ 4:

<sup>22</sup> Տե՛ս **Ե. Մարգարյան**, Դրվագներ Յին Յայաստանի հոգևոր մշակույթի պատմությունից, Եր., 2001, էջ 88-90:

<sup>23</sup> Եղիշեի Վասն Վարդանայ եւ Յայոց պատերազմին, էջ 5:

Այսպիսով, նախաբանում պատմիչը մի քանի ուղղություններ ընտրելով՝ Դավիթ Մամիկոնյանի պատվերն է կատարում՝ նրան տեսած չլինելով, իսկ տեսնելուց հետո՝ ինքն իրեն մոռանալով: Նամակից Դ. Մամիկոնյանի առաքինությունը և մեծությունը ճանաչելով՝ մեծարում է նրան, փառաբանական խոսքեր ասում, ինչպես այդ ժամանակ ընդունված էր (զարդարուն խոսքը միջնադարյան նամակի առանձնահատկություններից մեկն է): Եղիշեն գրում է Հայոց պատերազմի մասին՝ շատերին փառաբանելու համար, ցույց տալու նրանց մեծագործությունը և հանդիմանելու նվաստներին: Ուշագրավ է, որ առաջին կրոնական պատերազմներից մեկը քրիստոնեության համար եղիշեն Հայոց պատերազմ է համարում՝ այնուամենայնիվ դրա մեջ ազգափրկիչ հատկանիշներ տեսնելով, դրան ազգային-ազատագրական երանգ հաղորդելով<sup>24</sup>: Պայքարի պատմությունը նրա նպատակադրումն ու ծրագիրն է, որ իրագործվում է երկի մեջ:

Ամրապնդելով կառույցը նաև խորհրդանշական թվերով՝ պատմիչը լուծում է մեթոդաբանական մի այլ կարևոր խնդիր: Նա ուզում է ապահով և անխորտակ դարձնել իր երկի շինվածքը՝ այն գերծ պահելով չար ուժերի ներգործությունից, դրանով նաև ապահովելով երկնային փառք իր անձի համար: Հանուն այդ փառքի նա պատրաստ է ամենայն զրկանքների, նվաստացումների և անգամ մահվան: Կատարյալ ձևի մեջ դնելով Պատմությունը՝ ինքը ցանկանում է օգնել կատարյալ անհատներին:

Սկսում է արևելքի իշխանի՝ նեռի չար գործերի գործակցի մատնանշումով ու դրանց թաքուն խորհուրդը բացահայտելով: Մոզերի թյուր օրենքով էր սա շարժվում և «բազում անգամ մարտնչեր ընդ այնոցիկ՝ որ ոչ ընդ նովին օրինօք մտանէին»<sup>25</sup>: Բացահայտում է չարիքի արմատը, որ պատճառ դարձավ խաղաղության խախտման ու արյունալի պատերազմի: Ներքին իմաստային այդ իրողությունը, որպես զուգահեռականության դրսևորում, երևան է գալիս երկու նամակային միավորներում: Խոսքը Միհրներսեսի նամակի ու նրա պատասխանի մասին է՝ գրված Արտաշատի 449 թ. ժողովականների կողմից<sup>26</sup>: Պատմիչը հակադրում է դրանք որպես գաղափարական երկու իրարամերժ սկզբունքների դրսևորումներ<sup>27</sup>: Առաջին նամակում վզուրկ (ավագ) Միհրներսեսն առաքում է իր թուղթը հայոց մեծերին, որով նա նկատում է. «Ամենայն մարդ, որ բնակեալ է ի ներքոյ երկնի, և ոչ ունի զօրէնս դէնի մազդեզն, նա խուլ է և կոյր, և դիւաց Հարամանոյ խաբեալ...»<sup>28</sup>: Սա նույն անհաշտ ոգու արտահայտությունն է, որ կա առաջին գլխի սկզբնամասում: Սասանի ցեղը, մոզերի կրոնով առաջնորդվելով, շատ անգամ կռիվ էր վարում նրանց դեմ, ովքեր չէին ընդունում այդ կրոնը<sup>29</sup>: Այդտեղ տրվում է դրույթը: Ընդհանրական պահանջն իր հերթին բխում է «Պիտոյից գրքից»: Խիստ քննադատության ենթարկելով անտիկ հեղինակներին (հատկապես Ջերոդոտոսին), որոնք կարևորում էին առասպելաբանությունը, այս գրքի գրողը մերժում է առասպելի ճշմարտացիությունը, իրական լինելը, պատմական փաստերով հաստատվելը: Առասպելը պարզամիտների

<sup>24</sup> Տե՛ս **Մ. Ավդալբեգյան**, նշվ. աշխ., էջ 19-20:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>26</sup> Տե՛ս **Ա. Ալեքսանյան**, նշվ. աշխ., էջ 20: Նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Եր., 1984, էջ 171-173:

<sup>27</sup> Տե՛ս **Մ. Էմին**, Երկասիրութիւնները հայոց լեզուի, գրականութեան, եւ պատմութեան մասին (1840-1855 թթ.), Մոսկուայ, 1898, էջ 41:

<sup>28</sup> Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 24:

<sup>29</sup> Տե՛ս **Լեոն**, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1986, էջ 86-89:

կորստյան պատճառ է դառնում<sup>30</sup>, ուստի այն անպիտան է: Հովսեփը պատասխան թղթում հաստատում է հենց դա՝ շեշտելով, որ իրենք առասպելներին այլևս չեն հավատում:

Պարսից գերագույն հրամանատարի բերանով ներկայացվում է աշխարհի արարման պարսից առասպելը: Ջրվանը 1000 տարի զոհ է մատուցում և ասում, որ իրեն գուցե մի որդի ծնվի Որմիզդ անունով: Բայց ծնվում է երկվորյակ: Խոստանում է առաջինը ծնվողին տալ իր իշխանությունը: Հոր որովայնը պատռելով՝ հայտնվում է թերահավատությունից հղացած չարասեր զավակը: Խիստ լալիս է Ջրվանը և 1000 տարով նրան հանձնում իշխանությունը, որից հետո խլում է այն և հանձնում լուսավոր որդուն, որը ստեղծում է Երկինքն ու Երկիրը, կյանքն ու բարի արարածներին: Իսկ խավարասեր եղբայրը, հակադրվելով նրան, ստեղծում է չար գոյերին ու խավարային էակներին<sup>31</sup>: Այսպիսով, պարզ տրվում է, որ հեթանոս պարսիկի համար աշխարհը դուալիստական սկզբունքի վրա է կառուցված. այդ հավասարակշռությունը չի կարելի խախտել: Ուստի բնական է թվում արյաց զորապետի գայրույթը, երբ մարդիկ իբր ասում են, թե «Ձմահ Աստուած արար, և չար, և բարի ի նմանէ լինին»<sup>32</sup>: Այսինքն՝ մեկ աստծո մեջ են պարփակված երկու սկիզբներ: Սակայն Որմիզդը չարիքը չի ստեղծել: Իսկ քրիստոնյաները մոլորվելով չարիքի պատճառ են համարում Աստծուն և նրա անվան հետ կապում մարդու՝ դրախտից վտարվելը: «Մի ուրիշ մոլորութիւն» է համարում Արարչի՝ մահկանացու կնոջից ծնվելը: Իբր եթե քրիստոնյա «մոլորյալ» առաջնորդներին լսելու լինեն, ապա տղամարդիկ կանանց չպիտի մերձենան, և մարդկությունը պիտի վերանա: Այս մահացու մոլորություններից հայերը՝ իր հպատակները, պետք է հրաժարվեն: Դա արքայական պահանջ է՝ ենթակա անհապաղ կատարման: Հնչում է Միհրնեսեի ահեղ կոչը, թե «Մի՛ (հ)աւատայք առաջնորդացն ձերոց», քանզի, նրա կարծիքով, վերջինները խաբեբաներ են<sup>33</sup>: Թղթում առաջադրված դրույթը հետո պետք է «լրացվի» հակադրությամբ: Անտիկ մտածողության ևս մեկ տարրի առկայություն է: Պատմության տեքստում երկրորդ թուղթը հակադրույթն է և ջատագովական մեթոդով հորինված առանձին երկ: Հրովարտակը ստատիկ վիճակի խորհրդանշանն է: Նա միտված է դեպի շարժումը, սակայն դեռ շարժում չէ: Շարժումն առջևում է: Պատմիչը ոճական տեսակետից պահպանում է թղթագրական ժանրին բնորոշ բաղադրիչները<sup>34</sup>:

Թղթերի իրական օրինակներն ունենալու դեպքում ևս հեղինակները պարտավոր էին նամակներին որոշակի տեսք տալ, իսկ եթե ոչ, ապա իրենց շարադրանքը հարմարեցնել ներտեքստային միավորներին: Լարումը մեծանում է, և գաղափարական հակադրությունը վերածվում է գրական կոնֆլիկտի: Անտիկ գրական ավանդույթին հակադրվում է նորը՝ միջնադարյանը: Այն պետք է հաստատի իր կենսունակությունը, ճշմարտացիությունը: Այսպիսի փոփոխությունը հասկացության ներսում (տվյալ դեպքում՝ ժանրի) ընդունված է անվանել մշա-

<sup>30</sup> Գիրք պիտոյից, Եր., 1993, էջ 60-69:

<sup>31</sup> Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 92-93: Հետաքրքիր է, որ Եզնիկն ու Եղիշեն տարբեր կերպ են ներկայացնում հերոսների ծնունդը և տարբեր ժամանակներ են նշում Արիմանի տիրապետության տարիների մասին. ինը հազար և հազար: Մենք համաձայն չենք այն տեսակետի հետ, թե Եղիշեն իր մտքերը մագդեզականության մասին շարադրվիս ազդվել է Եզնիկից, ինչպես պնդում է Խաչերյանը: Տե՛ս Լ. **Խաչերյան**, Եղիշէ պատմիչը եւ իր մատենագրական յուշարձանը // «Հանդես ամսօրեայ», 2001, թ. 1-12, էջ 46:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>33</sup> Տե՛ս Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 26:

<sup>34</sup> Տե՛ս Ա. **Ալեքսանյան**, նշվ. աշխ., էջ 16-18:

կութային պայթյուն<sup>35</sup>, որն առաջ է բերում նախորդ իրողությունը մերժող մտավոր նոր շարժում: Այդպիսին է միջնադարյան նամակը անտիկի համեմատ: Դա ժամանակի համար դառնում է ընդհանրական մոտեցում՝ գրելու մեթոդ: Այդպիսով, երկրորդը խորհրդանշում է շարժումը, որով կյանքը նոր հունի մեջ է մտնում: Ձևի առումով առաջադրվում են դրույթը և հակադրույթը: Ժանրի մակարդակում այդ հնարավորությունը դառնում է իրական, և բովանդակային հակադրությունը բխում է նրա ընձեռած հնարավորությունից: Լայն առումով դա թելադրված է ժամանակի պահանջով: Սակայն կոնֆլիկտը դուրս է նեղ ժամանակային տիրույթից և արտաժամանակյա է, հավերժական, քանզի երկու աշխարհների «պայքարի պատմությունն» է: Մեթոդական տեսակետից ստեղծվում է յուրատեսակ իրավիճակ: Հզոր արյաց տերությունը պարտադրում է իր գաղափարախոսությունն ու ուժը, և նրան հակադրվում է թվաքանակով փոքր և ֆիզիկապես նվազ մի ուժ, որը, սակայն, հաղթում է հնացած գաղափարական համակարգին: Հաղթանակն Աստծո շնորհիվ է տրվում: Երկու աշխարհների բախումն ավելի դաժան է, անզիջում, քան անգամ Ավարայրի դաշտում կատարվածը:

Երկվորյակների և Միհրի մասին բերվող տեղեկություններն ավելի են ընդլայնում մեր իմացության շրջանակը: Առաջինները և վերջինը շատ տարօրինակ ու անհավանական ծնունդներ են, այն է՝ առասպելական մտածողության արդյունք (երկվորյակները հայրական ծնունդ են, իսկ Միհրը ծնված է մի կին էակից, որն իր կինն է ու մայրը միաժամանակ): Դա քրիստոնյայի համար անընդունելի մի իրողություն է: Իսկ հեթանոսի համար ամոթալի է ընդունել Աստծո մարդեղացումը, մարդուն խղճալը, նրա համար մեռնելը: Մինչդեռ Աստված բարիքներ է շնորհում, թույլ տալիս բարգավաճել ու բազմանալ, ուստի անհնաստ է նրա մահվան մասին խոսելը, ինչպես դա անում է Միհրներսեհը: Եվ սա արդեն քրիստոնեական մտածողության արգասիք է: Հակադրելով աստծո երկու իրարամերժ պատկերացումները՝ Եզնիկը «Պարսից քեշի սկզբնական աստուած Ջրվանի գոյությունը մերժելու համար՝ այսպես է բանավարում: Ինչ որ կա,- ասում է նա,- կան արարիչ է, կան արարած: Ջրվանն արարիչ չէ, որովհետև Որմիզըն ու Արհմն են արարիչ ըստ պարսից քեշին: Ջրվանն արարած էլ չէ, որովհետև, ըստ պարսից քեշի, Ջրվանից առաջ վեհագույն ու չինչ, և նույնիսկ ոչ մի բան չի դնում, որ նրան ստեղծեր: Ապա ուրեմն Ջրվանը չի եղել և չկա»<sup>36</sup>: Այդպիսի մոտեցում է ցուցաբերում և Եղիշեն:

Երկրորդ թղթի թղթառաջում նշվում է. «Յովսեփ եպիսկոպոս, հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս, Միհրներսեհի մեծի հազարապետի Արեաց եւ Անարեաց՝ բազում խաղաղասէր մտօք բազմացի ողջոյն առ քեզ եւ ամենայն մեծի սպահիդ Արեաց»<sup>37</sup>: Այնուհետև առաջադրվում է խաղաղություն, արդյունքում՝ կարգաբանված տիեզերքի խնդիրը: Աղոթում են Աստծուն «վասն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զտիեզերական իշխանութիւնդ» և այլն<sup>38</sup>: Մարմնավոր աշխարհի հիշատակումն իր խորհրդանիշով՝ թագավորով, հաստատում է նրա կարգաբանվածության և ներդաշնակության գաղափարը:

Մեթոդական առումով պատմիչը նախ ակնարկում է մի բանի մասին, այնուհետև նախապատրաստում է բուն ասելիքը: Նա շոշափում է մի

<sup>35</sup> Տե՛ս **Лотман Ю.** Культура и взрыв. М., 1992, էջ 28-35:

<sup>36</sup> **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Գ, էջ 149:

<sup>37</sup> Եղիշի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 28:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 29:

կարևոր հանգամանք: Այն, որ արյաց մեջ էլ կան քրիստոնեությանը հարողներ ու նահատակներ: Պարսիկներին պետք է ճանաչել տալ ճշմարտությունը պարսիկների միջոցով: Դա մեթոդական շատ հետաքրքիր գյուտ է: Այդ առիթով խոսվում է կարգալույծ մոգպետի մասին, որ հավատաց «յԱստուած կենդանի՝ յարարիչն երկնի և երկրի, և բան առ բան ելոյծ և իմացոյց ձեզ զօրէնս ձեր: Եւ իբրեւ ոչ կարացին բանիւ զդէմ ունել նորա, քարկոծեալ մեռալ յՈրմիզդէ արքայէ»<sup>39</sup>: Չկարողանալով լռեցնել այդ մեծ մտածողին՝ Որմիզդ արքան սպանել է տալիս նրան: Ակնարկ է արվում այն մասին, որ այդ կերպ դեռևս չի ապացուցվում պարսկական կրոնի առավելությունը, հատկապես՝ ճշմարտացիությունը<sup>40</sup>: Պատասխան թուղթն իր բնույթով դավանաբանական է: Այն հերքում է անտիկ բազմաստվածական մտածողությունը և փառաբանում է քրիստոնեական կրոնը: Ըստ Եղիշեի՝

-Թագավորը երկրի վրա կարգուկանոնի ու ներդաշնակության պաշտպանն է ու խորհրդանիշը, ուստի պարտավոր է ինքը չխախտել կարգուկանոնը: Չպետք է խախտել նաև երկնային թագավորի տիրապետության օրենքները:

-Երկինքը սրբերի ու հրեշտակների բնակության վայրն է, իսկ երկիրը՝ մարդկանց: Երկրի վրա եղող իշխանությունը տրված է ի վերուստ: Երկու թագավորություններն էլ նման են, սակայն տարբեր են իրենց նշանակությամբ. կարևորն առաջինն է:

-Տալիս է անճառելի Աստծո բնութագիրը, որ որպես մեթոդաբանական հիմք օգտագործվում է Դիոնիսիոս Արիոպագացու կողմից<sup>41</sup>: Դա ժխտումով հաստատման մեթոդն է (խորհրդապաշտական մտածողության դրսևորում):

-Միհրը կնոջից է ծնվել, բայց ամոթալի է այդ աստծո ծնունդը սեփական մորից: Միհրներսեհի հնչեցրած մեղադրանքը Հիսուսի մասին, թե իբր ապօրինի ծնունդ է, ոչ թե՝ անեղ, իր հերթին բացահայտում է հեթանոս աստվածների անհավանական և ամոթալի ծագման հանգամանքը: Չէ՞ որ մեջտեղում կա Ջրվանի որդիների՝ այրամարդուց ծնված լինելու անհավանական փաստը: Իսկ Տիրոջ ծնունդը պատմիչն աստվածային գթասրտության նշան է համարում և Աստծո ու մարդու միջև անմիջական կապի դրսևորում:

-Մերժում է չորս տարրերի պաշտամունքը և համարում դա մոլորություն ճշմարիտ Աստծուն չճանաչելու պատճառով: Չարի առկայությունը տիեզերքում Եղիշեն բացատրում է որպես կամքի ազատության դրսևորման հետևանք: Աստված չի բռնանում արարածների կամքի վրա, ուստի հավատքի հարցում Հազկերտի անհանդուրժողականությունը մեծ ապօրինություն է: Իսկ բանական արարածներից միայն հրեշտակներն ու մարդիկ են թողնված իրենց կամքին, մյուս բոլոր արարածները զուրկ են կամքից ու բանականությունից: Իրենք՝ քրիստոնյաները, պատրաստ են Տիրոջ սիրո համար մեռնելու, որպեսզի արժանանան անմահ կյանքի:

Պատմիչը գաղափարական հակահարված է տալիս հակառակորդին: Միհրի առասպելին իրենք այլևս չեն հավատում, հավատում են Մովսեսի մարգարեական տեսիլներին և օրենքներին: Իրենց ուխտը մարդու հետ չէ,

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Տե՛ս Ա. Դուլխանյան, Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից, Եր., 2009, էջ 6-7:

<sup>41</sup> Տե՛ս Thomson R. W. The Armenian Version of the works attributed to Dionysius The Aeropagite, Lovanii in aedibus E. Peeters, 1987, էջ 1-12:

այլ Աստծո: Եղիշեի նպատակը միայն ուսուցողական չէ և ոչ էլ միայն առաքինի անձերի գործերի փառաբանում<sup>42</sup>: Որպես հուզախառով գեղարվեստական հոլացք՝ այն ավելի լայն ընդգրկումներ ունի: Իհարկե, այստեղ աշխարհայացքային ու քաղաքական ավելի բարդ ու բազմանշանակ հարցեր են շոշափված: Առաջադրված է դրույթ-հակադրույթ ծայրաբևեռների համադրության խնդիրը: Դա հակադրություններով տրոհված աշխարհի խորհրդանշական միասնության գաղափարի հաստատումն է: Գործադրելով բազում մեթոդական ձևեր՝ Եղիշեն հասնում է գեղարվեստական լուրջ ձեռքբերումների: Գեղարվեստական ինֆորմացիայի առումով կուտակելով բավարար փաստեր՝ նա վիթխարի նյութ է փոխանցում արտատեքստի միջոցով՝ ակնարկների, թերասությունների, զուգահեռականության, հակադրությունների և այլ ճարտասանական միջոցների հմուտ ու անվրեպ օգտագործման շնորհիվ: Եվ շարժման մեջ է դնում մարդու ողջ ենթագիտակցական աշխարհը: Օրինակ՝ հենց այն, որ պարսիկ գինվորներն են զարմանքից ապշում, երբ արյաց բանակի առջև ընթերցվում է պատասխան թուղթը և հաստատում նրանում առաջադրված մտքերի ճշմարտացիությունը, խոսում է հեղինակի խորագիտության մասին:

Գաղտնիք չէ, որ մեթոդի դրսևորման ձևերից մեկն էլ կապված է կերպարակերտման կամ հերոսների ստեղծման հանգամանքների կամ սկզբունքների հետ: Մանավանդ այս տեսակետից Եղիշեն մեծագույն վարպետ է և փայլում է մարդկային բնավորությունների կերտմամբ: Ինչպես 5-րդ դ. մյուս պատմիչները, այնպես էլ Եղիշեն աչքի է ընկնում բարձր հերոսականությամբ օժտված պատմական անձանց կերպարների կերտմամբ<sup>43</sup>: Վարդանի օրինակը դրա լավագույն վկայություններից մեկն է: Մյուս կողմից՝ պատմիչը նաև իր հերոսներին «խոսեցնում» է՝ երկխոսությունների առատությամբ գերազանցելով մյուս հեղինակներին<sup>44</sup>: Որոշակիորեն կարևորելով հերոսների ներքին աշխարհը՝ նա հմտորեն ստեղծում է հավերժական էություններ: Այդ դեպքում ևս գործում է հակադրության սկզբունքը՝ հերոսներ ու հակահերոսներ, ինչպես՝ հեթանոսներ-քրիստոնյաներ, պարսիկներ-հայեր, օտարներ-յուրայիններ, նվաճողներ-բռնազավթվածներ, բռնակալներ-հպատակներ, վերջապես՝ ուրացողներ-հայրենասերներ և արդյունքում՝ վերիններ՝ սրբեր ու անմահներ, և մահկանացուներ: Եթե հակադրության մի ուղղությունը գաղափարաքաղաքական է, ապա մարդկային էությունները պայանավորված են ազգային, կրոնական, դասային հակադրությամբ: Բևեռներում ունենում ենք Աստված և չաստվածներ, Աստված և սատանա, Քրիստոս և արևելքի իշխան (սատանայի գործակից), Վարդան և Հազկերտ, Հովսեփ և Միհրներսեհ, Վարդան և Վասակ, վերջապես՝ վարդանանք և վասակյանք: Այս հակադրությունը լրացնում է գաղափարական հակադրության մյուս կողմը՝ ամբողջացնելով ասելիքը:

Մեթոդական և գեղարվեստական առումով կատարվել են մի քանի նշանակալից քայլեր:

1. Հայ ուղերձային թուղթը գալիս է անտիկ ավանդներից, պահպանում է նրա ժանրային առանձնահատկությունները, սակայն կրում է բովանդակային լուրջ փոփոխություններ: Թղթագրությունը նվիրվում է

<sup>42</sup> Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 67:

<sup>43</sup> Տե՛ս Մ. Ավդալբեգյան, նշվ. աշխ., էջ 26-31, 39:

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 36-37:



հատկապես ջատագովական խնդիրների արծարծմանը և լուծմանը: Եղիշեի թղթագրական նյութերը որոշակիորեն հակվում են դեպի առաքելական սկզբունքներով գրվող, ներբողայնության, քարոզի տարրեր ներառող աստվածաբանական թուղթը:

2. Գեղարվեստական մտածողության ողջ համակարգը փոփոխության է ենթարկվում: Դա գեղարվեստական մտածողության նախորդ ձևի՝ կոլեկտիվ մտածողության վերափոխումն է անհատականի: Առասպելատածողության նախորդ ձևը փոխարինվում է անհատական-հեղինակայինի: Դա առաջին հերթին անրապնդվում է 5-րդ դ. հայ պատմագրության մեջ, այնուհետև՝ լայն տարածում գտնում մյուս ժանրերում:

3. Առաջնային են ու կարևոր նաև կերպարակերտման սկզբունքները, որոնք բխում են պոետիկայի ընդհանուր պահանջներից: Այդ ասպարեզում ևս Եղիշեն մեծ ձեռքբերումներ ունի, և դա զալիս է նրա երկում երկխոսությունների ու մենախոսություն-ճառերի առատ գործածության փաստից: Նրա կերտած կերպարներն աչքի են ընկնում հերոսականությամբ ու հայրենասիրությամբ: Կրոնասիրությունն անգամ անցնում է հայրենասիրության պրիզմայով, վերաարժևորվում դրանով: Հերոսների միջև հակադրությունը տրվում է ընդհանուր այդ օրինաչափության համաձայն: Թեև նրանք բևեռացված են, սակայն լիարժեք մարդկային տիպարներ են՝ իրենց առավելություններով ու թերություններով: Թշնամուն բացասական տեսանկյունից երևան բերելով հանդերձ՝ Եղիշեն նաև չի թերագնահատում նրան:

4. Պատմության կառուցվածքային տարրերի առանձնացումը ժանրերի հաշվառումով մեթոդական կարևորագույն քայլ է: Եղիշեն ինքն է կատարում բաժանումը՝ ցույց տալու երկի տեքստային սանձանները: Գաղափարաքաղաքական հակադրությունը տարածվում է կյանքի բոլոր բնագավառների վրա: Ավելի շատ հենվելով մեկնողական մեթոդի վրա՝ Եղիշեն հասնում է տպավորիչ հաջողության ինչպես երկի լարումների ստեղծման ու հետաքրքրության խթանման նպատակով, այնպես էլ գեղարվեստականության:

**САРГИС МКХИТАРЯН – О методических особенностях посланий Егшише.** – В "Истории" Егшише объединены три источника: 1. послание к Давиду Мамиконяну; 2. свиток, посланный в Армению Йаскертом (или Михнерсехом); 3. ответ арташатского вече (собрания) 449 г. Синкретически исследуя эпоху, жанр и тему произведения, автор выявляет особенности, присущие тексту "Истории". Здесь ярко выражен метод противопоставлений, чрезвычайно важный с точки зрения художественности и семантики. Традиция этого метода восходит к античности и, претерпев определённые структурные изменения, получает новое развитие в средние века.

**SARGIS MKHITARYAN - On Methodic Peculiarities of the Yeghishe's Epistolaries.** - Yeghishe's *History* includes three epistles: the introductory epistle addressed to David Mamikonyan, Hazkert's (or Mihnerseh's) edict sent to Armenia and the response of Artashat meeting in 449. The research into the genre, theme and the period has revealed the peculiarities of the author's work by methods of syncretism. One of the text highlights includes the juxtaposition that plays an important part in history from the perspective of artistic and notional meanings. The genre that dates back to the ancient tradition evolved in the Middle Ages, after having undergone several structural changes.